



ԱՐԻ

ՏԵՂԵԿԱՏՈՒԹՅՈՒՆ



"ARI,"
BULETINUL

al
UNIONEI ARMENE
de
CULTURA FIZICA
și
CERCETĂȘII

Adres: Bulv. Carol 27
BUCUREȘTI

ՏԱՐԵԿԱՆ

Ռուս. 120 ԻՅ. Ս.Ր.Տ. 2036

ՀՆՏ 5 ԼԷՅ

Բ. ՏԻՄԻ ԹԻ 4

15 ՄԱՐՏ 1925

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԷ

ԿՈՐՈՒՍՏ ՄԸ

Քանի մը չարաթ առաջ Փարիզի մէջ հոգը զին հայ երիտասարդ մտաւարականութեան ամէնէն կարկառուն դէմքերէն մէկը, Գառնիկ Շէկրիկեան: Քաղաքական փոթորիկները զայն ալ նեւերէն լին ռատանէ ոստան: Հուսկ ուրեմն կանոյ առեր էր ան Փարիզ ուր կարճատե հիւանդութիւն մը զգետնեց զանկա, իր ուժերուն բովանդակ թարմութեանը մէջ:

Շէկրիկեանի մահով հայ երիտասարդութիւնը կը կորսնցնէ իր ամէնէն ժրջան ու խզմամիտ գործիչներէն մէկը, և Հ.Մ.Ը.Մ. նա ալ մէկը իր ամէնէն կենսունակ տարրերէն:

Մեր սահմանէն դուրսէ պատմել անոր կեանքը իբրեւ ազգային գործիչ, և ճշտել իր դէպքը հանրային աշխատանքներու մէջ: Բայց մեր պարտքն է ըսելը թէ Գառնիկ Շէկրիկեան մեծ դեր ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի նախնիին կեղծոնը տպար կազմակերպութեամբ մը օժտելու աշխատանքին մէջ, և չստ սլլտ վատնեց որպէսզի հայ կեանքին մէջ ծաւալ գտնէ Հ.Մ.Ը.Մ.ին հետ սկսած բարեբար չալ ժամը, և մանաւանդ որպէսզի այդ չալ ժամը ընթանայ լուրջ, ապահով, կարգապահ քայլերով: Դեռ պատերը չպզուած՝ փոթորիկը եկաւ: Շատ մը շատերու պէս Շէկրիկեան ալ իր աշխատանքները թողուց, ու թափառեցաւ երկրէ երկիր ու քաղաքէ քաղաք: Բայց հազիւ վերջնական կայք մը գտած, Շէկրիկեան Փարիզի մէջ ալ սկսաւ Հ.Մ.Ը.Մ.ի ուսնաջմանը նուիրել հանրային մարդու իր բովանդակ կորովը: Ան մէկն էր Հ.Մ.Ը.Մ. Ը Փարիզի մէջ վերստեղծողներէն:

Ան կը շիջի երբ Հ.Մ.Ը.Մ.ը դեռ չատ պէտք ունէր իրեն: Ու անոր համար մանաւանդ անդամ մանելի է իր կորուստը, որովհետեւ քանի կ'ուսնանայ մարդական չարժուածք մեր մէջ ու քանի կը վարակէ մեր երիտասարդ ու պատանի սերունդը՝ այնքան կը շատնայ անհրաժեշտութիւնը Շէկրիկեանի պէս ուժեւորու, որոնք ուղղեն նաեւ վարչական մեքենան:

Արի ն, թարգմանն ըլլալով Հ.Մ.Ը.Մ.ի Ռուսմանիոյ չրջանի վեց մասնաճիւղերուն, յարգանքով կը խոնարհի իր ողբացեալ եղբորը թարմ հոգադրութիւն առջեւ:

ՄԱՐԶԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ. ի Ռուսմանիոյ Շրջանային վարչութիւնը իր չրջանի մարզիկներուն ու չարդութեան կը յանձնէ՝ հետեւեալ օրէնքները, խմբադրուած եւ հրատարակուած Հ.Մ.Ը.Մ.ի կեղծոնին կողմէ 1921ին. —

ՈՒԺ ԱՌԱՄ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ՑԱՏԿԵԼ

1. Մրցումը կը սկսի 1.25 մէթր բարձրութենէն եւ մինչև 1.50 մէթր 5ական սանթ մէթր կը բարձրացուի և յետոյ 2 ականսանթի մէթր: Իւրաքանչիւր բարձրութեան համար միայն երեք փորձ թույլատրելի է:

2. Եթէ մրցորդ մը ցատկելու համար ոստում մը կ'ընէ, սակայն ձողին վրայէն չանցնելով, փորձ մը կը նկատուի: Իսկ առանց ոստում ընելու եթէ ձողին տակէն կ'անցնի, երեք անգամ կրկնուելու պարագային փորձ մը կը նկատուի:

3. Որ եւ է բարձրութեան չափը կորոշուի ձողին ամենացած մասին վերի եզերքին եւ հողին միջեւ եղած ուղղահայեաց հեռաւորութեամբ:

4. Մրցորդները երբ իրենց կարգը գայ, հողին վրայ իրենց ուղած նշանները իրենց դնել, սակայն իւրաքանչիւր ոստումէն անմիջապէս վերջը զանոնք պէտք է ջնջեն կամ վերցնեն:

5. Եթէ որ եւ է բարձրութենէ մը բոլոր մըրցորդները վերնան անցնել, առաջնութեան կայքը որոշելու համար չորրորդ յաւելածական պատահութիւն մը կը տրուի: Եթէ այդ բարձրութենէն չկրնան ցատկել, առաջնութեան կարգը որոշելու համար հարկ է բարձրութիւնը նուազեցնել իսկ այդ պարագային ալ եթէ որոշ արդիւնք մը ձեռք չբերուի, այդ կարգը կ'որոշուի բաղդով:

ԿԵՑԱՄ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ՑԱՏԿԵԼ

1. Մրցումը կը սկսի 1.10 մէթր բարձրութենէն եւ մինչև 1.25 մէթր 5 ական, յետոյ 2 ական սանթի մէթր կը բարձրացուի: (Տեսնել նաեւ ուժ առած բարձրութիւն ցատկելու թիւ 3 և 5 հատուածները):

2. Անմիջապէս որ մրցորդը կը պատրաստուի ցատկել, հետեւեալ շարժումները փորձ մը կը նկատուին:

1) Եթէ աջ ոտքը երկու անգամ հողէն բարձրացնէ

II) Եթէ ձախոտքը երկու անգամ հողէն բարձրացնէ:

III) Եթէ իւրաքանչիւր ոտքը յաջորդաբար մէկ անգամ բարձրացնէ:

IV) Եթէ աջ ոտքը երկու անգամ հողին վրայ սահեցնէ:

V) Եթէ ձախ ոտքը երկու անգամ հողին վրայ սահեցնէ:

VI) Եթէ իւրաքանչիւր ոտքը հողին վրայ յաջորդաբար մէկ անգամ սահեցնէ:

VII) Եթէ աջ ոտքը մէկ անգամ բարձրացնէ և ձախ ոտքը մէկ անգամ սահեցնէ:

VIII) Եթէ ձախ ոտքը մէկ անգամ բարձրացնէ և աջ ոտքը մէկ անգամ սահեցնէ:

IX) Եթէ աջ ոտքը մէկ անգամ բարձրացնէ և մէկ անգամ սահեցնէ:

X) Եթէ ձախ ոտքը մէկ անգամ բարձրացնէ և սահեցնէ:

ՈՅԺ ԱՌԱՅ ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆ ՅԱՏԿԵԼ

1. Ամէն մրցորդ երեք ոտուամբ իրաւունք ունի: Եւ եթ յաւելւածական պատկեր թիւնէր կը տրուին լաւագոյն երեք մրցորդներուն և այս վեց ոտուամբուն ալ ղ/ւնքէն առաջնութեան կարգը կ'որոշուի:

2. Եթէ որ եւ է մրցորդ նշանատախտակէն դուրս հողին դպի իր մտքմտն սր եւ է մասովը, ըլլայ ղէ-սի առաջ կամ իւր նշանատախտակին քաղի կ'զմելը, այդ ոտուամբը չ'աշխուէր, լաւագոյն վարձ մը կ'ընկաւ:

3. Ոտուան հետաւորութիւնը կը չսփռուի ցատկելու նշանատախտակին դուրսի եզրքէն ցատկած տեղերէն ամենաետեի հետքէն ուղղահայեաց երկայնութեամբը:

4. Եթէ վեց ոտուամբներէն վերջ երկու կամ աւելի մրցորդներ հաւասար ըլլան, մէկ պատկերութիւն ևս կը տրուի:

5. Ամէն մրցորդ բուն փորձերուն սկսելէն առաջ միջապէս առաջ նախնական փորձ մը ընելու արտօնուած է, միայն թէ չի չտրուիր:

6. Մրցորդ մը հաշին վրայ կրնայ նշան դնել, սակայն իւրաքանչիւր փորձէն վերջ պարտաւոր է զայն վերցնել կամ ջնջել:

ԿԵՅՈՒՆ ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆ ՅԱՏԿԵԼ

(Տեսնել ուժ առած բարձրութիւն ցատկելու թիւ 2 հատուածին բոլոր օրէնքները: Իսկ մրցորդներու կարգը որոշելու համար տեսնել նոյն իսկին թիւ 3 և 5 յօդուածները):

ԵՐԵՔ ՔԱՅԼ ՅԱՏԿԵԼ

1. Միայն յաջորդական քաղերով եղած ոտուամբները թոյլատրելի են:

(Տեսնել նաև ուժ առած երկայնութիւն ցատկելու թիւ 1, 2, 3, 4, 5 և 6 յօդուածները):

ՁԻՆՎԵԼ ԲԻԶՆԵՍԻՍԻՒՆ ՅԵՏԿԵԼ

1. Մրցումը կ'սկսի 2,20 մէթր բարձրութենէն և մինչև 2,50 մէթր 10 ակուն, իսկ անկէ վերջ 5 ակուն սահմաններէն կը բարձրացուի:

(Տեսնել նաև ուժ առած բարձրութիւն ցատկելու թիւ 2, 3, 4 և 5 յօդուածները):

2. Որեւէ մրցորդ իր սկսական եղելակայ ձողը կրնայ գործածել, սակայն ոչ մէկ պարագայի տակ, ըլլայ ցատկած առէնը և կամ օդին մէջ, վարի ձեռքը վերինէն վեր չի կրնար փախադրել, նմանապէս՝ վերի ձեռքը ձողն ի վեր չի կրնար սահեցնել:

ՍԿԱՒԱՌԱՅ ՆԵՏԵԼ (2,50 տրամագծով չրջանակէ մը)

1. 90 աստիճաննոց հատուածէ մը դուրս նետուածները չեն հաշուուիր:

2. Մրցումներէն առաջ չրջանակին մէջէն ոչ մէկ նախափորձ թոյլատրելի չէ:

3. Նետուածք մը ապօրինի կը նկատուի երբ մրցորդը իր մարմնոյն սր եւ է մասովը չրջանակին առջևի կէսէն դուրս հողին կը դպի կամ թէ իր նետուածքը նշանակուելէն առաջ դուրս կը ցատկէ: Նաև նետուած միջոցին կամ անկէ առաջ չրջանակին մետաղեայ եզրքին վրայ կ'ուէ, կամ թէ նետելէն վերջ, մրցորդը իր մասովը կամ ձեռքովը չրջանակին առջևի մետաղեայ մասին կամ հողին դպի: Մրցորդը իր հաւասարակշռութիւնը հտնելէն առաջնապէս վերջ չրջանակին Լտեի կողմէն դուրս կ'ելլէ:

4. Իւրաքանչիւր մրցորդի երեք փորձ թոյլատրելի է, իսկ երեք լաւագոյններուն երեք յաւելուածական պատկերութիւններ կը տրուին, որմէ վերջ առաջնութեան կարգը կ'որոշուի:

ԵՐԿԱՅՆ ՆԵՏԵԼ (2,10 տրամագծով չրջանակէ մը)

Տեսնել սկաւառակ նետելու օրէնքները:

ՆԻՋԱԿ ՆԵՏԵԼ

1. Նիզակ կը նետուի 10 սահմաններ խորութիւն ունեցող նշանատախտակէ մը, որ հաստատապէս հողին մէջ դաւումած պէտք է ըլլայ:

2. Նետուածք մը ապօրինի է եւր մրցորդը իր մտքմտն սր եւ է մասովը նշանատախտակէն դուրս հողին դպի իր նետուածքը նշանակուելէն առաջ:

3. Նետուածք մը կանոնաւոր փորձ կը նկատուի սակայն չի չափուիր Եթէ նիզակը նախ երկաթեայ ծայրին վրայ չի յնայ, այսինքն՝ Եթէ նախ ետեւի ծայրը հողին դպի:

4. Նետուածք մը կը չափուի նիզակին ինկած տեղին եւ նշանատախտակին կամ անոր ուղղութեան միջև եղած ուղղահայեաց հեռաւորութիւնովը:

(Տեսնել նաև սկաւառակ նետելու թիւ 4 հատուածը):

ՎԱՋՔԵՐ

1. Ճամբայ հանելու համար հետեւալ հրամանը պիտի տրուի: Գծերնով վրայ Պատրաստ և ատրճանակի պայթում:

2. Ատրճանակին պայթումէն վերջը ճամբայ հանողը Եթէ տեսնէ որ մէկ կամ աւելի մրցորդներ կանոնաւոր ճամբայ ելան՝ եւ կամ թէ մրցորդ մը նպատակաւոր կ'ելլուի իր ընկերոջ արգելք կը հանդիսանայ, ատրճանակի կրկին հարուածով մը վաղողները իրենց տեղերը կը վերադարձնէ, մինչև որ օրէնքի սահմաններուն մէջ ճամբայ ելին:

3. 100, 200, 400, 800 մէթր վաղքի մէջ եթէ որ եւ է արդարացի բողոք հաստատուի, մրցումը կը կրկնուի, յանցաւոր մրցորդը եւ կամ մրցորդները չեն մասնակցիր:

4. 1500, 3000 մէթր վաղքի մէջ ապօրինութիւններ գործողները դատաւորներու որոշումով եւ հաշտարար դատաւորին հաւանութեամբ կամ անմիջապէս մրցումէն դուրս կը հանուին եւ կամ թէ հաւանակ պարագային առաջնութեան կարգին մէջ չեն մտցուիր:

5. Մրցորդ մը իր ընկերոջմէն մէկ մէթր հեռւէն եւ մէկ մէթր առջևէն կրնայ անցնել: Հակառակ պարագային ղ/տումաւոր արգելք մը կը նկատուի և քստ աջնմ կը պատժուի:

ՊՈՒՔՐԷՇ

Նախորդ թիւով տեղեկացուցած էինք թէ՛, աթ-
լէթիք եւ ֆուլթայլի փորձերու համար որոշուած էր
Y. M. C. A ի դաշտը, բայց ան վերջերս ուղմէնդարո-
ցականներու կողմէ գրաւուելով, ստիպուեցանք, մին-
չեւ ցնոր տնօրէնութիւն փորձերը կատարել Unirea ի
նախկին դաշտը Obor ի ետին: Բոլոր աթլէթներու ու-
շագործութեան կը յանձնենք վերոյիշեալ պարագան,
որպէսզի, ամէն կիրակի ժամը 8էն 11 ներկայ ըլլան
ու կանոնաւորաբար հետին փորձերուն: Փութայլի
փորձերն ալ որոշուած է կատարել նոյն դաշտին վրայ,
նոյնպէս կիրակի օրերը կէսօրէ յետոյ ժամը 3էն 5:

Կիրակի 8 մարտ կէսօրէ յետոյ, մասնաձիւղիս
ֆութայլի Բ. խումբը մրցում մը ունեցաւ տեղւոյս
Macabi Հրեաներու մարզական միութեան Կրք խում-
բին հետ, որ վերջացաւ առանց արդիւնքի 0 ի դէմ 0 (ով
Այս մրցումէն յայտնի եղան մեր խաղացողնե-
րու գլխաւոր պահպանները, որոնք չենք ուղիւ մի առ
մի թուել, նկատի ունենալով անպատրաստից դաշտ
եղած ըլլալին, որ արդէն ինքնին կ'ապացուցանէ թէ
մեծ սխալ մըն էր: Ներկայիւս պիտի թելադրենք մեր
խաղացողներուն աւելի կտրի որութիւն տալ փորձե-
րուն որպէսզի կարելի ըլլայ խաղի ժամանակ comb-
naison ունենալ, որ շատ կարեւոր է:

Երկուշաբթի 9 մարտ երեկոյ, վարչութեան
հրաւերով բոլոր մարզիկները հաւաքուած էին դարո-
ցի սրահը, ու, մասնաձիւղիս ատենապետը կարծի
թելադրութիւններ ըրաւ ներկաներուն, և երկու խոս-
քով, կազմուած երգչախումբին մինչեւ այսօրուայ
ուրեքացած գործունէութիւնը տեղեկացուց, ու առաջադ-
րեց ներկաներուն յետ այսու կանոնաւորաբար հետե-
ւիլ երգչախումբի փորձերուն որոնք տեղի պիտի ու-
նենան ամէն երկուշաբթի երեկոյնք ժամը 8էն 9:
Դպրոցի սրահը:

Այս վերջին մէկ երկու շաբթուայ ընթացքին,
մեծ ոգիւրութիւն մըն է որ կը տեսնուի մասնա-
ձիւղիս նորակազմ գալուցիներու խումբին մէջ, որոնք
շարունակ կը հաւաքուին դարոց ու հրահանգներ կը
կը ստանան իրենց վարիչ առաջնորդէն, մօտ մէկ
ամիս է որ կազմուած է գալուցիներու խումբը, բայց
որովհետեւ տղաք դեռ պատրաստ չէին քննութեան,
մասնաձիւղը չէր յայտարարած անոնց կազմութիւնը:

Վերջին օրերս Երջանային վարչութեանէն ստաց-
ւած մէկ շրջաբերականը մեզ կը տեղեկացնէ մաս-
նաձիւղիս ֆութայլի եւ սկաուտական խումբերը
պատրաստ պահել, Զատիկի տօն օրերու առթիւ, հետեւ-
եալ վայրերը այցելելու համար, Ա. ֆութայլի խումբը
եւ սկաուտական խմբակ մը դէպի Թրանսիլվանիա,
Բ. խումբը դէպի Ռուսնոք, իսկ սկաուտական եւ
ֆութայլի խումբ մըն ալ դէպի Օրբանոց:

Մասնաձիւղս որոշած ըլլալով կատարել այս
տարուան մասնաձիւղի ոգիւրականներ ապրիլի վեր-
ջաւորութեան կամ մայիսի սկիզբները, այժմէն կը
հրաւիրենք բոլոր աթլէթները վերսկսիլ իրենց փորձե-
րուն որոնց համար յայտարարութիւններ եղած են ար-
դէն: Թ. Ա. Պ.

ՔՈՆՍՍԹԱՆՑԱ

Ինչպէս նախապէս յայտարարուած էր «Արի» ի
մէջ, ամսոյս 26ին «Հայկազեան» վարժարանի սրահին
մէջ տեղի ունեցաւ Քոնսթանցայի 36 երկսեռ նոր-
ընծաներու երգուման արարողութիւնը:

Երկու օր առաջ սրահը (որ մեր հաւաքատեղին
է միանգամայն) զարդարուած էր սկաուտներու եւ
Հ. Մ. Ը. Մ. ի անդամներու ջանքերով:

Ժամը, 10ին բոլոր սկաուտական թեկնածուները
և նորընծաները եկեղեցի գացին ու պատարագին ներ-
կայ գտնուեցան: Յետոյ սրահը բարձրացան ուր Հա-
մադոսպ քահանայ Պետիկեան աւուր պատշաճի ճա-
ռով մը հանդէսը բացաւ, ոգիւրելով թէ սկաուտնե-
րը եւ թէ ներկաները:

Անկէ ետ Ը. Մ. Ը. Մ. ի վարչութեան նախա-
գահ Պ. Ա. Եարաֆեանը խօսեցաւ օրուան տօնին մա-
սին թուելով անմահ հերոսին կատարած դիւցադրական
գործերը եւ այն մեծ դերը զոր կատարեց Վարդան,
ազատելով մեր ցեղը ստոյգ և ահաւոր կորուստէ մը
եւ յայտնեց որ ինք յիշոյս է թէ՛ հոս երգումի ե-
կած այս փորրիկներն ալ պիտի աշխատին Վարդանի
օրինակներուն հետ իլ:

Ենչտեց երգումի արարողութեան նուիրականու-
թիւնը ու մտանշնչեց այն պարտականութիւնները
որոնց յանձնառու կ'ըլլան նորընծաներ իրենց երգու-
մով, յորդորեց իրականացնել սկաուտական դասնան-
քի բոլոր կէտերը և ձգտիլ մանաւանդ նուիրագործել
երգումի այն կէտը, որով երգուեալ կը խոստանայ
Ժ ա ո ա յ ե ի Հ ա յ ր ե ն ի ք ի ն:

Բացարձակ ու խորհրդաւոր լռութիւն մը կը տիրէր
և խոր յուզում մը նկատելի էր հանդիսականներու
նայուածքներուն մէջ, երբ տեղի ունեցաւ երգումի
արարողութիւնը, որուն էր նախագահէր Հ. Հ. սրատ,
Հիւսպատոս եւ Հ. Մ. Ը. Մ. ի տեղւոյս պատուակալ
նախագահ Պ. Ճ. Ալթունեան:

Հանդէսէն վերջ ցուցադրութեան հանուած
նորընծաներու յիշուէ աւելի կտոր ձեռակապն աշ-
խատութեան արդիւնքները վիճակահանութեան դըր-
ւեցան:

Հանդիսականները ցրուեցան չափազանց ուրախ
և միանգամայն խանդավառ վիճակի մէջ:

ՊԼԶԱՐԺԷ

Պուրքէշի սկաուտական կեդր. Յանձնախումբի
անդամներէն մէկուն Պաղարճը տուած այցելութենէն
ի վեր, մասնաձիւղիս սկաուտական գործը նոր թա-
փով մը առաջ կը տարուի:

Ամէն շաբաթ տեղի կ'ունենան առաջնորդական
հաւաքոյթներ, ուր առաջնորդները իւրաքանչեւ ձեռով
դասեր կ'առնեն մարզական և կրթարարական գի-

տելիքներու շուրջ: Բացի այս՝ տեղի կ'ունենան շաբաթը 2 անգամ խմբակային դասախօսութիւններ եւ մէկ անգամ ընդհանուր:

Քսան օրէն մօտ 10 սկառտներ կու տան իրենց նորընծայի քննութիւնները, որմէ յետոյ խումբը պիտի զրադի Բ. կարգի գիտելիքներով:

Մասնաճիւղիս ֆուլթայի խումբը դեռ չէ սկսած փորձերու, առաջ կը տարուին դասախօսութիւնները:

Գալով ավելի թիւին պէտք է ըսել որ ձմեռ եղանակին կարելի էր փորձեր ընել, բայց եւ այնպէս վարչութիւնը տակաւին դունդ մը իսկ չէ առած որ դործի սկսուի, և ասոր հետեանքը կ'ըլլայ՝ ի հարկէ զ է ր օ օ օ օ:

ԽԱՉԻ

ԿԱԼԱՑ

Հ. Մ. Ը. Մ. ի Ռուսական Շրջանային Վարչութեան անդամներէն Տօքթ. Սալոյի նախաձեռնութեամբ կալացի երիտասարդութիւնը ամսոյս 2ին վերջապէս հիմը դրաւ Հ. Մ. Ը. Մ. ի կալացի մասնաճիւղին: Քսան ժողովականներու ներկայութեամբ ընտրուեցաւ հետեւալ առժամեայ վարչութիւնը.

Ատենապետ՝ Ս. Տէր Յակոբեան, Ատենադպիր՝ Յ. Սահաթեան, Դանձապետ Վ. Արզուման, Գոյքաքապան՝ Ա. Առաքէլեան, ֆուլթայի խմբապետ՝ Յ. Գրիգորեան, սկառտ խմբապետ՝ Գ. Տէտեան, ավելիք խմբապետ՝ Ա. Խաչիսաշեան: Մասնաճիւղին պատուակալ նախադահութիւնը առաջարկուեցաւ Պ. Միհրան իբրանոսեանի որ սիրով ընդունեց:

Կալացի հայութիւնը իր բաժինը բերաւ որք սկառտներու զգաւորութեան հաւաքման գործին մէջ: Այդ առթիւ եղան հետեւալ նախապատուութիւնները, որոնք զրկուեցան Պուրէշ Հ. Մ. Ը. Մ. ի Ռուսական Շրջանային Վարչութեան.

Իբրանոսեան հզարք 1 ծրար, Աւետիքեան 1 ծրար, Ա. Ճիւղմէճեան $\frac{1}{2}$ ծրար, Սէֆէրեան $\frac{1}{2}$ ծրար, Լ. Շահաղիզեան $\frac{1}{4}$ ծրար, Գ. Մուրատեան 500 լէշ, Գ. Արսլանեան 500, Վ. Տիմիտեան 500, Ս. Արզար 50, Ոմն 300, Ոմն 500, Տիարպէքիբեան 50, Մեծատուրեան եւ Սամանճեան 500, Արիկեան 130, Կ. Սրապեան 700, Մեքսիքո $\frac{1}{2}$ ծրար, Ս. Քիւրքճեան 1 ծրար մանած:

ՍԻՆԻՍԹՐԱ

Սիւսթրայէն Պ. Վ. Կէմիճեան կը տեղեկացնէ մեզ թէ Հ. Մ. Ը. Մ. ի տեղւոյն մասնաճիւղը մեծ ոգեւորութեամբ փարած է գործի մասնաճիւղը վերջերս կազմակերպած է հանդէս մը գոյացնելով բաւական հասոյթ մը՝ զոր յատկացուած է վերջերս յառաջ եկած, պարտքերուն:

ՍԹՐՈՒՆԿԱ

Սթրուկայի որբանոցին սկառտները կը շարունակեն իրենց աշխատանքները՝ յառաջիկայ Զատիկին յաջողութեամբ անցընելու համար իրենց քննու-

Հ. Մ. Ը. Մ. ԱՆԴԱՄԱՆԻՐ,

ՁԵՐ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ ՊԱՐՏԱՐԵՑԻՔ ԲՈՂՈՐԻՆ

Կ'երեւի մենք որոշեր ենք կատարեալ ընելու այն աղէտը, սրուն հնթարկուեցանք Հայերս 1914—1922 շրջանին:

Կ'ակնարկենք Հայերու իրարու հետ օտար լեզուով խօսելուն: Քալէա Մօշիլօրի երեք հռչակաւոր սրճարան ունի, ընտրեցէ՛ք մ'ը որ կ'ուղէք, մօտեցէ՛ք հայ խումբի մը և ականջ տուէ՛ք, եթէ ռումֆաներէն չէ խօսած լեզուներն, անպայման թուրքերէն է. այսպայման կ'ըսենք, չափազանցութիւն է. գոցէ՛ք, բայց այստողերը գրողը դեռ ոչ մէկ խաղի կամ պիլարտի սեղանի շուրջ լսեց հայերէնը:

Ամօթ և ա' խղճութիւն է այս, մանաւանդ օտարութեան մէջ, ուր առաւել քան երբեք պէտք ունինք պահելու մեր ազգային արժանապատուութեան հետ մեր ազգային ոգին, որուն պահապանը, կրօնքին հետ և անկէ ալ առաջ՝ լեզուն է:

Ռուսէն կառավարութիւնո մեզի չարգիլեր ո'չ մեր կրօնքը եւ ո'չ լեզուն, տէրը եւ պաշտպանը ըլլանք անոնց:

Ուր են այն հարիւր հազարաւոր Հայերը որոնք դարեր առաջ զաղթեր են օտար երկիրներ, մեռան, ո'չ բազմացան ու բարգաւաճեցան՝ ստուարացնելու համար այն պետութիւնները որուն իշխանութեանը տակ մտեր էին. ու այս՝ կորսնցուցած ըլլալուն համար նախ իրենց լեզուն և յետոյ—անխուսափելիօրէն— իրենց ազգութիւնը:

Մեր օտարախօս ծիծաղելիներէն քիչ մը պատկառանք կը պահանջենք իրենց անունին եւ լեզուն հանդէպ:

Սորվինք ռումաներէնը, նոյն իսկ—ինչո՞ւ չէ—այնքան լաւ սրքան մեր մայրենի լեզուն, բայց ռումաներէնը պահենք օտարին համար և մեր լեզուն մեզի: Գալով թուրքերէնին, այլիս ոչ մէկ արդարացում կը մտնէ հոտ:

Y. M. C. A. ի կամ Y. W. C. A. ի ու է մասնաճիւղի չէնքէն ներս մտածնուդ զրեթէ առաւնց բացառութեան, պատի մը վրայ պիտի կարգաք հետեւալ խօսքը խոշոր տառերով գրուած. « Ամէն քան է առաջ, մայրենի լեզուն զուրկ երեւ, եւ կը սիրեւ զայն »:

Օտար տառերով, ամէն անհատի ուղղուած այն պատգամը առնուազն յուզիչ է:

Սկառտիզմը որ Y. M. C. A. ի կրտսեր եղբայրն է եւ անոր պէս ունի երրորդութիւն մը իրր նշանաբան՝—միտք, հոգի, մարմին,—կոչուած է պահակի պէս հսկելու մեր այնքան քաղցր լեզուն և վտանգւելու այնքան ատակ ազգային ոգին:

Ա. ՇԱՀԷՆ

թիւները: Իրենց նորընծայի քննութիւնները պիտի տան որբանոցի տաներէն 45ը: Մնացեալները հաւանաբար իրենց քննութիւնը տան տարեկան հանդէսի առթիւ:

Հ. Մ. Ը. Մ. և ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԻՆ
ՅՈՒԹՊՈՂԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Նախորդ թղթակցութեամբս թուած էի Հ. Մ. Ը. Մ. և Փարիզի մասնաճիւղին կատարած ֆութպոլի մրցումներուն արդիւնքը մինչև 19 հոկտ. 1924: Անկէ կը շարունակեմ ժամանակագրական կարգով. —

1. — Հոկտեմբեր 26ին մեր Ա. խումբը յաղթեց A. S. A. Montereau Ա. խումբին 1ի դէմ 3 ուլ: (Մօնթրօ Փարիզէն 100 քիլմ. հեռու է:) Բ. խումբը յաղթեց A. S. Assuranceի պահեստին 0ի դէմ 3 կօլով:

2. — Նոյեմբեր 1ին, Ա. խումբը յաղթեց U. S. Maison Lafitte Ա. խումբին 1ի դէմ 4 կօլով: Մեր Բ. խումբը U. S. Maison Lafitteի Բ. խումբին 0ի դէմ 2 կօլով: Այս խումբը կը խաղայ *primitie division* ւն:

3. — Նոյեմբեր 2ին Հ. Մ. Ը. Մ. և Բ. խումբը հաւասար եկաւ C. A. Brunoyի Ա. խումբին 2ի դէմ 2 կօլով:

4. — Նոյ. 9ին մեր Ա. խումբը յաղթեց Division d'Honneurի ամենալաւ խումբերէն համաբաւոր S. C. Choisy (HC) խումբին 1ի դէմ 3 կօլով, իսկ մեր Բ. խումբն ալ պարտուեցաւ Choisy Բ. խումբէն 2ի դէմ 1 կօլով:

5. — Նոյ. 16ին միայն Բ. խումբը մրցեցաւ և յաղթեց Փարիզի յունական պահեստի խումբին 0ի դէմ 3 կօլով:

6. — Նոյ. 23ին մեր Ա. խումբը հաւասար մնաց C.A. Parisի, Փարիզի ամենազօրաւոր 8 խումբերէն միոյն հետ, որ 3 տարի յաջորդաբար խլած է Ֆրանսայի ախոյեանութիւնը (11—12—13):

Մեր Բ. խումբը յաղթեց A. C. Seineի Բ. խումբին 1ի դէմ 4 կօլով:

7. — Նոյ. 30ին մեր պահեստին հաւասար եկաւ A. C. Cormeillesի Ա. խումբին (ի դէմ 0 ուլ):

Մեր Բ. խումբը հաւասար եկաւ Houilles A. C.ի Բ. խումբին 1ի դէմ 1 ուլ:

Մեր Գ. խումբը հաւասար եկաւ U.S.S. Gratienի Գ. խումբին 3ի դէմ 3 ուլ:

8. — Դեկտ 7ին Հ. Մ. Ը. Մ. և Մ. խումբը 3րդ անգամ գաւառ հրաւիրուելով յաղթեց C. S. Fontainebleauի 0ի դէմ 1 ուլ:

Նոյն օրը Բ. և Գ. խումբերը պարտուեցան C. A. Dyonisien և U. S. Courbovieի Բ. խումբերէն 3ի դէմ 1 կօլով:

9. — Դեկտ. 14ին մեր Ա. խումբը յաղթեց A. S. Instituteurs Ա. խումբին 0ի դէմ 16 կօլով (մըրցանիշը կատարած է...): Մեր Բ. խումբը հաւասար եկաւ A. S. Sartouvilleի Բ. խումբին 1ի դէմ 1 ուլ:

Մեր Գ. խումբը յաղթեց A. S. Bondyի 0ի դէմ 4 ուլ:

10. — Դեկտ 21ին մեր Ա. խումբը հաւասար եկաւ C. E. Sportsի Ա. խումբին 1ի դէմ 1 ուլ:

(Ֆրանս. խումբէն կը խաղային Ժիլպէն՝ Բերայէն, Եր. Խորասանճեան և շատ մը ուրիշ խաղացողներ): Մեր Բ. խումբը յաղթեց C. E. Sportsի պահեստին 0ի դէմ 2 ուլ: Մեր Գ. խումբը յաղթեց A. S. Passyի Բ. խումբին 0ի դէմ 5 ուլ:

11. — Դեկտ. 25ին (Ծնունդ) մեր Բ. խումբը յաղթեց Stade de l'Est պահեստին 0ի դէմ 2 կօլով:

12. — Դեկտ. 28ին մեր պահեստին յաղթեց Chelles Gournayի Ա. խումբին 0ի դէմ 5 ուլ:

Մեր Բ. խումբը Փարիզի ոստիկանական Բ. խումբին 1ի դէմ 3 ուլ:

13. — Յունվ. 1 1925, Հ. Մ. Ը. Մ. և Գ. խումբն պարտուեցան Stade de l'Est Ա. խումբին 3ի դէմ 1 ուլ:

14. — Յունվ. 4ին մեր Ա. խումբը հաւասար եկաւ A. F. Gar. Colombes Ա. խումբին հետ 3ի դէմ 3 ուլ (սոյն խումբը Փարիզի ամենազօրաւոր խումբերէն է և կը պատկանի Division d'Honneurի):

Մեր Բ. խումբը յաղթեց Argenteuilի Բ. խումբին 0ի դէմ 1 ուլ:

15. — Յունվ. 11ին դադար:

16. — Յունվ. 18ին մառախուղին պատճառով բոլոր խումբերն ալ ռաիպուեցան հանգիստ ընել:

17. — Յունվ. 25ին 4րդ անգամ ըլլալով մեր Ա. խումբը գաւառ դնաց, Ham քաղաքը որ Sommeի ճակատամարտէն ձեւաւորուած քաղաքներէն մին է և յաղթեց տեղական Ա. խումբին 1ի դէմ 2 կօլով:

Խումբին շատ զեղեցիկ ընդունելութիւններ ըրին: Մեր Բ. խումբը հաւասար եկաւ U. S. Montrougeի Բ. խումբին 1ի դէմ 1 ուլ:

18. — Փետր. 1ին մեր Ա. խումբը հաւասար մնաց White Harrier զօրաւոր խումբին հետ 0ի դէմ 0 ուլ:

19. — Փետր. 8ին մեր Ա. խումբը 6 հօգուով դնաց գաւառ Կրդ անգամ, և պարտուեցաւ Mannevilleի Ա. խումբին 3ի դէմ 0 ուլ: Սոյն մրցումը մարտ 8ին նորէն տեղի պիտի ունենայ:

Մեր Բ. խումբը 7 հօգիով պարտուեցաւ Garcagne պահեստի խումբին 3ի դէմ 2 ուլ:

20. — Փետր. 15 Ա. խումբը յաղթեց Փարիզի 8 ամենազօրաւոր (Division d'Honneur) խումբերէն Sporting Club Choisy Ա. խումբին, անոր զեղեցիկ սթատին մէջ, բաւական հոծ բազմութեան մը ներկայութեան, հակառակ աննպաստ օդին, և ցոյց տուաւ թէ ինք առանց նիւթական օժանդակութեան, առանց դաշտի, առանց փորձի կրնայ ֆրանսական ամենալաւ խումբերուն հետ զլուխ ելլել: Սոյն յաղթանակը ապշեցուցած է ֆրանսական մարզական շրջանակները և գաւառի բոլոր խումբերէն մրցման հրաւերներ եղած են:

Բոլոր հայ խաղացողները քաջալերելի են իրենց ցոյց տուած քաջութեան և տխրիւնի համար:

Ա. խումբին կազմը հետեւեալը եղած է Choisyի դէմ.

Վ. Տէվէճեան, Ռ. Շահմիրեան, Ա. Արծիւեան, Աստ. Պաղտատարեան (խմբապետ), Վահրամ, Գրիգոր Կարապետեան, Օ. Գրիգորեան, Ս. Խուպէսէրեան, Կ. Կարապետեան, Ս. Կարապետեան, Հ. Հապիսեան:

Ա. խումբի պահեստի խաղացողներէն պէտք է յիշել Մ. Առատուրեան, և Հ. Պիւլպիւլեան որոնք բացակայութեան մը պահուն կ'անցնին Ա. խումբին մէջ:

Փետր 22ին ֆութպոլի յանձնախումբին որոշմամբ բոլոր խումբերը դադար պիտի ունենան:

Փարիզ

ՀԱՅԿ

Հ. Մ. Ը. Մ. ը ՊՈԼԿԱՐԻՈՅ ՄԷՁ

Հ. Մ. Ը. Մ. ի Պոլիարիոյ Շրջանի անդրանիկ Պատշաճաւորական Ժողովի որոշումներուն համաձայն Պոլիարիոյ Շրջանային Վարչութիւնը մանրամասնօրէն ուսումնասիրած էր Միութեան ծրագիրը — կանոնագիրը՝ զայն պատշաճեցնելով երկրին հիմնական օրէնքներու ոգիին եւ զայն վերջերս պաշտօնապէս ներկայացուցած էր կառավարութեան:

Այդ կանոնագիրը առանց ու եւ քի փոփոխութիւն կրելու Շրջ. Վարչութեան կողմէ գծուած բովանդակութենէն, ներքին եւ արտաքին հասարակական նախարարութեանց 1) փետր. 925 եւ թիւ 597 որոշմանդրով վաւերացուած եւ պաշտօնական խոշորակով վերաբաղարձուած է Շրջ. Վարչութեան:

Հ. Մ. Ը. Մ. ը ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԷՁ

Մարտ 1ի կիրակին տեղի ունեցաւ «Արծաթ բաժակ»-ի տրմի ֆինալ մրցումը Հ. Մ. Ը. Մ. ի եւ «Պոլսական միութեան» յունական խումբերուն միջեւ:

Հ. Մ. Ը. Մ. ի խումբը կը բաղկանար հետեւներէ.

Պ. Պ. 1. Հայկ Տէտէհան կօլէիր, 2. Խորէն Ահարոնեան եւ 3. Գ. Յարէթեան պէք, 4. Համբարձում Կիւտէնեան սէնթր հաֆպէք, 5. Արտաշէս Գօլանճեան եւ 6. Յարութիւն Գըպրէլեան հաֆպէք, 7. Մանուկ Թիւթիւնճեան, 8. Հայկազուն Սէթեան, 9. Զարէն Մինասեան, 10. Մկրտիչ Յարէթեան եւ 11. Մուրատ, ֆօրուէրը:

Հայկական խումբը կարելին ի դոքս դրաւ, անբնաւ չխնայեց իր ուժը, կորովը, առանց վհատելու եւ բարոյարքուելու, 90 վայրկեան անդադար պայքարեցու եւ ահա ըէֆէրին խաղը վերջացուց երկու կողմերն ալ հաւասար նկատելով եւ ոչ մէկ կողմէ որ եւ է կօլ նշանակուած էր:

Ապա երկուստեք հաւանութեամբ խաղը կէս ժամ երկարած գոլեցաւ:

Գնդակը երկու կողմն ալ հաւասար կը խաղար, այնպէս որ երկու կողմերն ալ հաւասար ճշմարտման անցուցին: Հազիւ թէ վայրկեան մը մնացած էր որ խաղը պիտի վերջանար եւ հաւասար պիտի նկատուէր, յանկարծակի հակառակորդ յառաջապահէն եկած անապասիի մէկ շիւթով գնդակը հայկական խումբի կօլբօսթներէն ներս մտաւ: Վայրկեան մը վերջը արդէն խաղը վերջացած էր:

Հ. Մ. Ը. Մ. ի խումբի մրցումներուն շարքը վերջացած է:

Այժմ Պոլսական միութեան խումբը ֆինալի մրցումը պիտի կատարէ «Բանաթիւնայիք» խումբին հետ, եւ յաղթական հանդիսացողը Աթէնքի 1924—1925 չրջանի չամբիօնը պիտի հռչակուի, ստանալով «Արծաթ բաժակը»:

ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐ ՀՆԴԻԱՍՏԱՆԻ ՄԷՁ

Հնդկաստանի ողիմպիական յանձնախումբը, լուրջ պատրաստութեան մէջ է, յաջող մարզիկներ տալու համար 19 Տի ողիմպիական խաղերուն: Արդէն զանազան չրջաններու մէջ քանի մը յաջող փորձեր կատարուեցան:

Կարկաթայի մէջ տեղի ունեցան ամէնէն կարեւոր խաղերը ինչպէս նաեւ 5 եւ 10 մղոնի վաղքը:

Ամիսներէ ի վեր, անգլիացի զինուորները եւ տեղացի ուժերը եռանդով փորձեր կը կատարէին, պարտութեան մատնելու համար Հայոց Մարզասիրական Ճեմարանի աշակերտ Պ. Միրզաբէգեանը, որ անցնալ տարի ջախջախիչ կերպով յաղթեց Հնդկաստանի ամէնէն լաւ վաղորդին, 10. վերստի վրայ մօտ մէկ մղոն աւելի առաջ անցնելով: Բայց ի դերեւ կրնա իր մըրցակիցներուն ջանքերը: Ան կրկին տարաւ յաղթանակը հակառակ մրցման օրը հիւանդ ըլլալուն:

Միրզաբէգեան կտրեց 10 մղոնը 1 ժամ 1 վայրկեան եւ 23,5 երկվայրկեանի մէջ, եւ նախկին մրցանիչը կտրեց 5 վայրկեան մէկ ու կէս երկվայրկեանով:

Կարկաթայի անգլիական թերթերը մեծ գովեստով կը խօսին հայ մարզիկներու մասին: Ուրախալի է նաեւ որ, մրցումին մասնակցող բոլոր հայ մարզիկները պատուաւոր դուրս եկան:

Ի ն կ ի չ մ է ն թերթը այս առթիւ կը գրէ թէ նկատի ունենալով Պ. Միրզաբէգեանի ձեռք բերած փայլուն յաղթանակները, մարզական ընկերակցութիւնը որոշած է պատուոյ վկայական եւ մասնաւոր միտալիոն տալ հայ մարզիկին:

ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆԲԸ ՃԱՎԱՅԻ ՄԷՁ

Ճավայի հայ երիտասարդութիւնը, մարզական գործունէութեան լծուած է, եւ չորհիւ 23 յուլիս 1922ին կազմակերպուած Հայկական Մարզական Ակումբին (Armenian Sporting Club), այսօր մեր մարզիկները կարեւոր դեր մը գրաւած են հոն:

Տեղական իշխանութիւնները, միշտ գնահատած են հայ մարզիկներու գործունէութիւնը:

Մասնաւորաբար Օուրապայտի քաղաքացի Պ. Տայքերման հինգ զանազան առիթներով բաժակներ եւ մետալիոններ տուած է հայկական խումբին: Մարզական ամէն տեսակ մրցումներու եւ հաւաքողիներու մէջ Հայերը ամէն ատեն տարած են փայլուն յաղթանակներ, եւ առիկա պատճառ եղած է որ Հայերու հանդէպ համակրանքի զգացում մը առաջ դայ այս հեռուոր երկրին մէջ: Այսօր, հոլանտական այս գաղութին մէջ, Հայերը ընդհանուր համակրանք կը վայելեն: Ուրախացողիչ է նաեւ այն պարագան որ, բոլոր Հայերը բոլորուած են մարզական ակումբին շուրջ:

Այդ տարի Ճավայի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, հայկ. ակումբը մրցումներ կատարեց Հոլանտական բը կ պ ի ի խումբին հետ: Այս առթիւ մեր մարզիկները բոլոր ճիւղերուն մէջ գիտեն արժեցնել հայ դնդերին գերակշռութիւնը: Գրեթէ բոլոր մրցումներուն մէջ հայ մարզիկները տարին ջախջախիչ յաղթանակներ՝ արժանանալով ժողովրդական եւ մամուլի գնահատումներու:

Ակումբը, ներկայիս կ'աշխատի սեփական մարզադաշտ մը ունենալ: Այս առթիւ արդէն հարկ եղած դիմումները կատարուած են տեղական իշխանութիւններու մօտ, եւ յոյս կայ որ քաղաքացիութիւնը նպաստաւոր ընթացք մը տայ հայ մարզիկներուն դիմումներուն:

Սկսուած իր երգումը կը կատարէ «պատուոյս վրայ կ'երգնում» նախաբանով:

Պատուի վրայ կատարուած երգումը մարդու մը համար պէտք է կտրմէ կեանքի այն կարեւոր հիմք, որուն վրայ կարող ըլլայ ձեռք իր բոլոր մարդկային ձգտումները:

Ասկէ առաջ ասպետներ կային, որոնք իրենց որոշած նպատակին համար ամէն վայրկեան իրենց կեանքն իսկ զոհելու պատրաստ էին եւ սլաղաթիւնը ցոյց կու տայ որ անոնցմէ շատ չատերը զոհուեալեցան նպատակին համար:

Այս ասպետները՝ առաքինի զործուէութիւն մը ունենալու համար սարդ յայտարարութիւն մը միայն չէին ընել, այլ հանդիսաւոր կերպով երգում կ'ընէին իրենց պատուոյն վրայ, թէ իրենց խօսքը միշտ պիտի կապեն իրենց սրտիւնին:

Սկսուած մը տեսակ մը ասպետ է, ան ալ իրեն համար որոշած է կեանքի ուղի մը, ան ալ ունի իր դաւանանքը: Սկսուածը՝ ասպետական ոգւոյն արդիւն կան ներկայացուցիչն է եւ անոր ճամբան շարունակողը:

Սկսուածն ալ ուրեմն պարտաւոր է իր յանձնառութիւնը ընել, արտայայտել իր կոչումը եւ իբր ազատ մարդ, իբր պատուաւոր մարդ կատարել իր երգումը:

Երգումը կը կատարուի ընկերներու եւ հասարակութեան առջեւ հանդիսաւոր կերպով: Երգումի ատեն ոչ մէկ ամօթխածութիւն, ո'չ մէկ անհաստատութիւն, ո'չ մէկ անճարակութիւն, ո'չ մէկ ընկրկում:

Երգումը պէտք է կատարուի կատարեալ գիտակցութիւնով, պէտք է արտասանուի յստակ եւ բարձր ձայնով, ան իր արժէքը կը կորսնցնէ երբ կ'մկմարով կամ թոթովելով կ'արտասանուի:

Մեծն Նարոյէտն իր զօրաւարները հաւաքած էր իւրաքանչիւրին իր դրօշակը տալու համար, վայրկեանը հանդիսաւոր էր. նախքան յանձնելը Նարոյէտն հորհուրդ անոնց:

— Կ'ուխտէ՞ք այս դրօշակները պաշտպանելու համար ձեր կեանքը զոհել, կ'ուզէ՞ք զանոնք ձեր քաջութիւնով յաղթութեան ճամբուն վրայ բռնել. կ'ուխտէ՞ք:

— Կ'ուխտենք, պատասխանեցին այս պետերը եւ բարձրացուցին իրենց զինանշանները օդին մէջ:

Եւ այս դրօշակները շատ երկիրներ տարին յաղթական կերպով եւ ի վերջոյ վաթերթի պատերազմին թողուցին զանոնք միայն այն ատեն երբ ինկան պատերազմի դաշտին վրայ:

Նոյն երգումը կատարած էին նաեւ քաջն Վարդան ու իր զօրաւարները, անոնք ուխտած էին իրենց կրօնը պաշտպանել Պարսից դէմ, ու կուռեցան, յարգեցին իրենց երգումը՝ մինչեւ իրենց նահատակութիւնը:

Պէտք է լաւ գիտնալ, որ բոլոր ասոնք իրենց երգումը պոռագին բարձր ձայնով, ձեռքերը տարածած, վառատակող աչքերով:

Պատիւը չի խոնարհիլ եւ ցած ձայնով չի խօսիր:

Սկսուած մըն ալ պարտաւոր է այս հերոսներուն պէս ընել, արտասանել իր երգումը ձեռք, հալեացքը, ձայնը եւ սիրտը բարձր բռնած:

Երգնուը ծանր բան մըն է:

Երգում ընելէ առաջ, պէտք է լաւ կերպով անդրադառնալ, գիտակցիլ թէ ի՞նչ բաներ կատարելու յանձնառու կ'ըլլայ, ի՞նչ պարտականութիւններ կը ստանձնէ, ի՞նչ տեսակ կեանք վարել կը մտադրէ:

Այն որ կ'ուխտէ՝ յանձնառու կ'ըլլայ նախ եւ մանաւանդ ինքն իր առաջ, իր խղճին առաջ եւ յետոյ միայն իր ընկերներուն ու հասարակութեան առաջ:

Երբ մէկը ինքզինքը անկարող կը դգայ պահելու իր խոստումը, երբ նոյն իսկ ամենափոքր կտակած մը անգամ ունի իր երգումով կատարելիք յանձնառութիւնը լրիւ կարենալ կատարելու մասին, աւելի լաւ է որ հրաժարի ուխտելէ:

Երգումը նոյնպէս չընդունիր ո'չ երկրայութիւն եւ վերապահում. ասոնք միայն երգումին նուիրականութիւնը խանդարեցու կը ծառայեն: Երբ թէութիւն ոչ կը մտնէ ուխտին մէջ, այնուհետեւ հարկ կ'ըլլայ այլեւ ամէն վայրկեան քննութեան ենթարկել թէութիւնը, վերապահումի ստոյմանը ու այսպէս խորժնլ երգումը: Աւելի լաւ է բնաւ չերգնուլ քան կատարել կիսկատար կերպով:

Գիտակցութիւնով, լրիւ եւ ազատօրէն կատարած երգում մը պէտք է պահուի ո'չ թէ ուրիշին առաջ միայն, այլ առաւելագոյն պահել իր խղճին առաջ:

Լաւ պէտք է ըմբռնել թէ պատուաւոր մարդ մը մինչեւ ուր կը պահէ իր երգումը:

Ամէն ազգի պատմութիւնները ունին իրենց երգումին պահպանումին համար իրենց կեանքը զոհողներու դրօշակներ: Հայերս ալ ունեցած ենք շատ մը հերոսներ՝ որոնք ուխտած իրենց կեանքը ազգին փրկութեան ի սպաս դնել՝ այդ ճամբուն վրայ ինկած են եւ որոնց անունը ամէնքս հպարտութիւնով կը յիշենք: Սկսուած մը կս պէտք է գիտնալ յարգել իր երգումը եւ անոր հաւատարմի մնալ ասպետի մը, հերոսի նման:

Յ. Գ. Ա.

ՈՐԲ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ ԶԳԵՍՏԱՌՈՐՈՒՄԸ

Ռուսմանիոյ որր սկսուածներուն հանդերձանք եւ սկսուածական պիտոյքներ հայթայթելու համար Հ. Մ. Ը. Մ. Ի Ռուսմանիոյ Երջանային վարչութեան ձեռնարկած հանգանակութիւնը յաջողութեամբ պսակուեցաւ: Այս յաջողութեան մէջ իրենց բաժինը ունեցան մէկ կողմէ մեր մասնաճիւղերու փոքրիկները՝ Ծնունդի եւ Բարեկենդանի առթիւ հաւաքելով նուէրներ իրենց որր եղբայրներուն համար, եւ միւս կողմէ Պուրքէշի եւ Կարաքի հայապատկանները որոնք սիրալոյսով նուիրեցին հանդերձանքի համար անհրաժեշտ պիտոյքները:

Որր սկսուածներու հանդերձանքի հանգանակութեան իրենց մասնակցութիւնը ընծայեցին Պուրքէշի մէջ՝ «Արաքս» ֆիրման, Ա. Ա. Երզնկեան, Գ. Գարապաշեան, Գ. Էքսէրճեան, Միտիկեան Եղբարք, Ղազարեան—Թաղարեան առևտրական տուները:

ՍԿԱՌՈՒՏԻՉՄԻ ՀԻՄՆԱԴԻՐ ՊԱՏԷՆ ԲԱՌԻԼԻ ԽՕՄԳՐ ՍԿԱՌՈՒՏ ՊԵՏԵՐՈՒՆ

Սկսուած պետի գործերուն ձեռնարկելու միջոցին, իրեն յաջողութեան միջոց մը կրնամ թելադրել որ ձեր նկարագիրը ու անհատական սովորութիւնները դուք ձեզի փոքր քննութեան մը ենթարկէք:

Նկատի ունեցէ՛ք որ ձեր տղաքը անդադար ձեզ պիտի դիտեն, ձեր առաքելութիւնները ու թերութիւնները ընդօրինակելու համար: Ձեր խիղճներուն դիմեցէ՛ք հասկնալու համար թէ ձեր նկարագրին մի գիծերը պարտիք լքել սկսուածներուն սիրոյն համար եւ սկսուածական դեղթափով մը զանոնք փոխելու աշխատեցէ՛ք: Ահաւասիկ օրինակներ:—

Լքելիք գծեր	Բացատրութիւն	Սկսուածական դեղթափ
Խստութիւն	Երբոր գործերդ լաւ չեն ընթանար կամ ուրիշներ քեզ գրգռեն, կը ջղախանաւս:	Ձանա ժպտիլ, ու յետոյ խնդա՝ մտածելով միշտ թէ պատահածը համեմատաբար կարեւոր բան մը չէ: Որովհետեւ եթէ իրաւունքիդ մէջն ես, բարկանալ անօգուտ է, իսկ եթէ անիրաւ ես, բարկութիւնդ կրնայ վտանգաւոր դառնալ:
Ծխել	Նկատի ունեցիր թէ տղաքը քեզ կ'օրինակեն. ծխելը անոնց առողջութեանը կը վնասէ:	Երբ համազգեստ կը հագնիս՝ դրոշմաւ ծխատու մի դներ:
Հայհոյիլ	Երբ որ գրգռուած ըլլաք հայհոյելու սովորութիւն ունի՛ք կամ նախատեսական խօսքեր կ'ընէ՛ք առանց անոնց նշանակութեանը վրայ խորհելու:	Փորձեցէ՛ք միշտ սուշել:
Ձարտխօսութիւն	Ուրիշներու թերութիւններուն մասին խօսելու կամ անոնց յոռի կողմերը միայն տեսնելու սովորութիւնը ունի՛ք:	Ընդունեցէ՛ք որ նոյն իսկ ամենազէշ մարդկանց մէջ հինգ առ 100 լաւը կայ: Ձանոնք փնտռել գտնելը հաճոյք մըն է:
Անհամբերութիւն	Արեգական ճառագայթները բռնելու կամ անկարելին ընելու փորձելէ ետք երբոր չյաջողիք, բախտը կ'անիծէ՛ք:	Դարբինը դարբնելով դարբին կը դառնայ կամ թռչունը կամաց կամաց կը շինէ իր բոյնը: Համբերութիւնը ու ժամանակը ոյժէն շատ աւելին կ'ընեն: Համբերութիւնը ամէն մարդերու մէջ, յաջողութեան միակ գագաթներն է:
Տրամութիւն	Ուրախութեան ու գուարճախօսութեան պակասութիւն:	Ինչպէս որ ամէն բաներու մէջ միշտ հինգ առ հարիւրը լաւ կայ, ուրիշ հինգ առ հարիւր մըն ալ գուարճալիք կայ: Ամէն բանին խենթ կողմը տեսնել քեզի յաճախ կը փրկէ յուսահատութենէն: Սշխատելու ատեն խնդալ սորվեցուր սկսուածներուն:
Երևակայութեան պակաս	Մտքի կուրուքիւն, հնարելու կարողութեան ու պատրաստակամութեան պակաս:	Ներկայացումներ, խնդիրներ ու յանապարտաստից ու յանկարծական խաղեր կազմակերպեցէ՛ք:
Ծոյեռանդութիւն	Ձեր պատկանած ընկերային կարգին, քաղաքական կուսակցութեան կամ կրօնական դասանանքին ջերմ կուսակից է՛ք:	Սկսուածական եղբայրութիւնը այդ բոլոր զանազանութիւնները կ'անյայտացնէ: Թոյշատու ըլլալ փորձեցէ՛ք ու զայն սորվեցուցէ՛ք նաեւ ձեր սկսուածներուն, որպէսզի անոնք բանի մը մասնակցելէ առաջ անոր նպատաւօր կամ աննպատակ կողմերը ուսումնասիրել գիտնան:
Անհատականութիւն	Անհնազանդութիւնը կամ տնուղղամտութիւնը պարտկելու համար շատ անգամներ այս բառը կը գործածեն: Անհատականութիւնը դէպի կարծանում կ'առաջնորդէ եթէ ան մշակւած չէ ընդհանուրին շահը նկատի ունենալով:	Խաղերու միջոցին կարելին պէտք է ընել ի պատիւ պատկանած խումբիդ ոչ թէ անձիդ: Այս բանը ձեր մէջ պիտի զօրացնէ պատասխանատուութեան, եւ անհատական կարգապահութեան զգացումները: